<<Նոր ժամանակի կրթություն>> ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏԱՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

Առարկա՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Էլյա Սևոյան

ՈՒսումնական հաստատություն՝ Արարատի մարզի Արևաբույրի միջնակարգ դպրոց

ԹԵՄԱՆ՝ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

ՀԱՐՑԸ՝ ՈՐՆ Է ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԵՐԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ԿԱՏԱՐՈՂ՝ ԷԼՅԱ ՍԵՎՈՅԱՆ

Բովանդակություն

1. Ներածություն----------
2. ԳԼՈՒԽ 1.Ինչ է արժեքային համակարգը և որոնք են դրա ձևավորման նախադրյալները----------
3. ԳԼՈՒԽ 2. Սովորողների արժեքային համակարգի ձևավորման գործոնները---
4. ԳԼՈՒԽ 3. Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը <<Գրականություն>> առարկայի դասավանդման ընթացքում----------
5. Եզրակացություն ----------
6. Գրականություն ----------

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթությունը միշտ էլ առանցքային նշանակություն է ունեցել հայ իրականության մեջ: Իր սկզբնավորման ժամանակներից հայ դպրոցը եղել է ժողովրդի քաղաքական ու ազգային գոյատևման, զարգացման գրավականը: Հայաստանում կրթությունը ավանդաբար բարձր վարկանիշ է ունեցել: Կրթության համակարգի բարելավումը, միջազգային ասպարեզում նրա մրցունակության ապահովումը, դասավանդման նորարարական մեթոդների և հնարների կիրառումը այսօր էլ պետական ու ազգային կարևորագույն խնդիր է:

Պետք է փաստել, որ հայոց լեզու և գրականության առարկան միշտ իր կարևոր ներդրումն է ունեցել հայ մանուկների ազգային մտածելակերպի, ազգային արժեքների ձևավորման գործընթացում: Դարեր շարունակ մեր պատմիչների և գրողների աշխատությունները օգտագործվել են որպես դասագիրք և ազգային, հայրենասիրական ոգով դաստիարակել բազում սերունդների:

Որքան էլ փոխվեն հասարակության մտածելակերպը, արժեհամակարգը, վերաբերմունքը ժամանակակից երևույթների և գործողությունների հանդեպ, միևնույնն է, ապագա սերնդին պետք է դաստիարակել ազգային արժեքներով և հերոսական անցյալի օրինակներով: Ցավով պետք է փաստել, որ այսօր մենք փոքր-ինչ հեռացել ենք մեր հոգևոր արժեքներից, որոնց արժևորելը և կյանքի կոչելը բոլորիս պարտքն է:

Աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է Հայաստանի Հանրապետության պետական չափորոշչում՝ որպես կրթության բովանդակային բաղադրիչ: Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով սովորողների պատրաստվածությունը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին նշվում է նաև արժեքները և դրանց ձևավորումը, որոնք պետք է տա դպրոցը:

Արժևորելով ապագա սերնդի արժեքային համակարգի ձևավորումն ու դաստիարակությունը՝ մենք արժևորում ենք մեր աշխատանքի դերը ուսումնական գործընթացում:

Սեփական փորձով պետք է փաստեմ, որ արժեհամակարգին անդրադառնալիս աշակերտների մեջ ոգևորությունն ու հետաքրքրությունն ուսումնական գործընթացում

տվյալ թեմայի նկատմամբ ավելի է մեծանում՝ ապահովելով կրթական որակի բարելավում:

Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ ասելիք ունի հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել ոչ միայն հայրենի և համաշխարհային գիտությունների ճյուղերը, այլև մանկավարժության անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը:

Ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է:

Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որը մեր անխառն ինքանտիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության մեջ:

Ուսումնասիրության նպատակը և խնդիրները.

Հետազոտության հիմնական նպատակն է ներկայացնել գրականության դերը սովորողների արժեքային համակարգի ձևավորման մեջ: Այդ նպատակների իրականացումը ենթադրում է կոնկրետ խնդիրների լուծում, որոնք էլ ապահովում են աշխատանքի տրամաբանությունն ու կառուցվածքը:

Առաջադրված նպատակին հասնելու համար աշխատանքում առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

• վերլուծել հիմնախնդրի վերաբերյալ մասնագիտական գրականություն,

• ներկայացնել սովորողների արժեքային համակարգի ձևավորման գործոնները,

• բացահայտել արժեքային համակարգի ձևավորման կարևորությունը դասավանդման ընթացքում,

• սովորողների մեջ ձևավորել արժեքային համակարգ «Գրականություն» առարկայի դասավանդման ընթացքում:

1. ԻՆՉ Է ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՈՐՈՆՔ ԵՆ ԴՐԱ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Արժեքային համակարգի սահմանումը, էությունն ու նշանակությունը

«Արժեք» բառն առաջ է եկել ֆրանսերեն «valoir» բառից, որը նշանակում է արժանի լինել: Արժեքն ինչ-որ բանի կարևորությունը, նշանակությունը և օգտակարությունն է: Արժեքային համակարգը կատարում է ամենօրյա կողմնորոշման դեր մարդու առարկայական և սոցիալական գործունեության մեջ:

«Արժեքները համարվում են մարդու գործունեության ու վարքի կողմնորոշիչ այն դեպքում, երբ նրա մեջ ձևավորված են արժեքային գիտակցությունը, արժեքային հարաբերությունները, դիրքորոշումները: Արժեքային կողմնորոշումը անձի գործունեության և վարքի մեջ որոշակի ուղղվածությունն է դեպի այս կամ այն արժեքը, իսկ յուրաքանչյուր առանձին իրավիճակում անձը ղեկավարվում է արժեքային գիտակցությամբ և արժեքային հարաբերությամբ»:

Գտնում եմ, որ արժեքների ձևավորման, արժեհամակարգի հստակեցման ամբողջ գործընթացը դիտվում է անձի կայացման և սոցիալականացման գործընթացների հետ միասին և կազմում նրա անբաժանելի մասը՝ պայմանավորելով անձի վարքը:

Արժեքը երեւույթ է մեր կյանքում, որի դիմաց մենք գին ենք վճարել: Վճարի

«արժույթը» կարող է տարբեր լինել՝ տվայտանքներ, հույզեր, այլ արժեքների զոհաբերություն, հարազատների, հայրենակիցների կամ նախնիների կորուստ, կորցրած հող, հայրենիք եւ այլն: Արժեքը հնարավոր չէ ստանալ հեշտությամբ, այն պետք է վերապրել, անցկացնել քո միջով, զգալ ու գիտակցել: Այդ ամենի դիմաց մենք ստանում ենք իմաստներ, քանի որ արժեքներն են իմաստավորում կյանքը: Առանց

արժեքների կյանքը դատարկ է: Հեշտ, առանց կորուստների եւ հաղթահարումների ապրելը երբեք չի երջանկացնում հենց այն պատճառով, որ չի բերում արժեքների ձեւավորման:

Արժեքների մեծ մասը սնվում է էթիկական նորմերից, ձեւավորվում է դրանց շնորհիվ: Էթիկական նորմերը անհրաժեշտ են մարդկանց համակեցությունը ապահովելու համար՝ դրանք պարտադրում են հրաժարվել ցանկալիից հանուն ընդհանուր շահի: Դրանք տարբեր են ոչ միայն տարբեր հասարակություններում, այլեւ անգամ հասարակության տարբեր շրջանակներում, նույն երկրի տարբեր տարածքներում:

Նորմերը տարբեր են քաղաքում եւ գյուղում: Էթիկական նորմերը մեզ թելադրում են վարքագիծ, եւ որքան դրանք ավելի պահանջկոտ են, այնքան ավելի լուրջ արժեհամակարգ է պետք ձեւավորել, որպեսզի մարդը բնականորեն դրանց համապատասխանի: Զարգացած մշակույթները ունեն զարգացած էթիկական նորմեր: Երբ դրանք քայքայվում են, պահանջները նվազում են, առաջանում են արժեհամակարգային խնդիրներ: Ահա թե ինչու առաջին հայացքից անվտանգ թվացող տարատեսակ «ազատությունները» իրենց հետ մեծ վտանգներ են բերում: Հիմա անդրադառնանք բարոյականությանը: Եթե էթիկական նորմերը ծառի արմատներն են, իսկ արժեքները՝ բույնը, ապա բարոյականությունը դրա սաղարթն է: Բարոյական է այն ամենը, ինչը նպաստում է արժեքների պահպանմանը եւ չի հակասում դրանց: Անբարոյական է ամենը, ինչը դեմ է արժեքներին եւ բերում է դրանց քայքայման: Օրինակ, ցանկացած հասարակության մեջ անբարոյական է դավաճանությունը միայն այն պատճառով, որ այն արժեզրկում է խոստումը: Եթե խոստումն արժեք չլինի, մարդկանց համակեցությունը կվերածվի մղձավանջի, քանի որ կվերանա փոխադարձ վստահությունը: Հենց դրանով է վտանգավոր, օրինակ, կոռուպցիան, քանի որ այն դավաճանություն է հանրությանը տված խոստմանը:

Երբ փլուզվում են արժեքները, խախտվում է համակեցությունը եւ տարածվում անբարոյականությունը: Մարդիկ դժբախտանում են, տնտեսությունն անկում է ապրում, հանցագործությունները դառնում են համատարած, կյանքը կորցնում է իմաստի զգալի մասը, մարդիկ սկսում են հեշտությամբ իրար կոտորել: Հենց այս պատճառով է, որ կրթության հենքը եւ գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձեւավորումը: Դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք, ուր հաստատուն են էթիկական նորմեր, ուր աշակերտները սովորում են դրանց համապատասխանել: Հաճախ դպրոցը ստիպված է պայքարել հանրության մեջ տարածված արատների դեմ եւ այդ պայքարում պարտավոր է հաղթել: Դպրոցում կյանքը չի կարող հեշտ լինել երեխայի համար՝ նա պետք է զգա ևցավ, ևուրախություն, ունենա թե դժվարություններ, թե հաղթանակներ: Դպրոցում աշակերտը պետք է ընկալի համակեցության նորմերի իմաստը եւ ընդունի դրանք: Այդ

ամենի պտուղը կլինեն իրական արժեքները, այլ ոչ թե թելադրված, անգիր արած, բայց աշակերտի համար ոչինչ չնշանակող ճշմարտությունները: Եթե մենք կարողանանք կառուցել դպրոցներ, որոնք կձեւավորեն արժեքներ աճող սերնդի համար, կունենանք աշխարհի ամենալավ եւ ամենահիմաստալից կրթական համակարգը: «Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակեր ոչ մանկավարժական մոտեցում խնդրին. Արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Ահա թե ինչու «արժեհամակարգ» հասկացությունը նաև զուրկ է խիստ որոշակի ստուգությունից: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնք թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը: Մասնավորապես՝ անգնահատելի է լեզվի և գրականության դերը՝ առանց նույնիսկ էականորեն տարբաժանելու մայրենի և օտար լեզուների նշանակությունը սույն խնդրի առնչությամբ:

Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական

ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի:

Ամփոփելով վերոնշյալ տեսակետներն ու մոտեցումները՝ կարող ենք նշել, որ արժեհամակարգի ձևավորումը հանդիսանում է դպրոցի կարևոր առաքելություններից մեկը, ուստի այն պետք է դառնա ուսուցման գործընթացի անբաժանելի տարր:

2. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը սովորողների մեջ ձևավորում է հայրենասիրություն, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների հանդեպ հպարտության զգացում:

Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները:

Կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ:

Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունքը սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ, այլ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանցային լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով: Կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են սովորողների անձի վրա: Սովորողները, իրենց տարիքային, սեռական և անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կյանքի ոճը և այլն: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին: Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով: Այս առումով իրավացի է Մ. Մոնտենը. «Մենք որքան ասես կարող ենք պնդել մերը, սակայն սովորույթն ու համընդհանուր կանոնները մեզ քարշ են տալիս իրենց ետևից» (Գևորգյան, 2002):

Սովորողների արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ ըստ տարիքային առանձնահատկությունների: Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է սովորողներիի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի

մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում և այլն: Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը, կենցաղին բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը: Սակայն այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից «աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ունակության ձևավորումն է»:

Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը միջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և այլն): Բնական է, որ այդ հեղինակավոր անձինք կարող են լինել նաև սովորողներիի վրա ներգործող հասարակական այս կամ այն կազմակերպությունների անդամները, դպրոցի տնօրենը, դասղեկը, ուսուցիչը և այլն: Սովորողը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, ինչպես նաև՝ բացասական:

Բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի արագ և անդառնալի բացասական ազդեցություն կարող են ունենալ սովորողի անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա: Հետևաբար արժեքների դաստիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն և ըստ հարկի՝ նաև միջամտություն:

Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակ է, ինչն էլ կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի (Бехтерев, 1994) :

Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման

հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ սովորողները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը:

Անհատական աշխատանքում դաստիարակվում է սովորողների ինտելեկտուալ պատրաստականությունը, դժվարությունները հաղթահարելու գործում ձևավորվում են համառության, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ:

3. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ «ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Գրականությունը բովանդակում է դաստիարակչական վիթխարի ներուժ, հայրենասիրություն և ազգային արժանապատիվ գոյություն: Հենց այս պատճառով է, որ կրթության զենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը:

Դպրոցում «Գրականություն» առարկայի դասավանդման նպատակն է գրական ստեղծագործությունների ուսումնասիրությունը, որի ընթացքում սովորողներին համապատասխան համակարգված գիտելիքներ են հաղորդում գրականության տեսության և պատմության, նշանավոր հայ և օտարազգի գրողների կյանքի ու գործի վերաբերյալ, ձևավորվում են քննադատական վերաբերմունք, գրական երկերը համարժեքորեն ընկալելու, վերլուծելու և գնահատելու կարողություններ:

«Գրականություն» առարկան չի սահմանափակվում միայն հայ գրականության և նրա պատմության դասավանդումով, այլ ավելի լայն բնույթ ունի: Այն ընդգրկում է տեղեկություններ համաշխարհային գրականության լավագույն ստեղծագործությունների, գրողների կյանքի ու գործունեության, գրականության տեսության հիմնական հասկացությունների, գրականության և հասարակական կյանքի փոխհարաբերության, արվեստի այլ տեսակների հետ ունեցած կապի, ինչպես նաև հայ և այլ ժողովուրդների բանահյուսության վերաբերյալ:

Գրականության դասավանդման հիմնական նպատակներից մեկը, բացի սովորողներին զուտ գրական երևույթներին ծանոթացնելուց, անհատի հոգևոր ու մտավոր զարգացմանը, անձի արժեքային համակարգի ձևավորմանը նպաստելն է, որի իրականացման համար անհրաժեշտ է սովորողներին հաղորդակից դարձնել հայ ժողովրդի հոգևոր ժառանգությանը, ազգային ու համամարդկային իդեալներին ու ձգտումներին, գրական հերոսների օրինակով և գրական երկերի միջոցով նրանց մեջ դաստիարակել մարդասիրական ոգի, բարոյական բարձր հատկություններ՝ բարություն, ընկերասիրություն, ազնվություն, պատվախնդրություն, պատասխանատվություն, հաստատակամություն, բարեխղճություն և այլ հատկանիշներ:

Գեղարվեստն անփոխարինելի տեղ և դեր ունի մարդու հոգևոր և բարոյական դաստիարակության գործում: Գրականությունը մարդկանց հոգիների վրա ներազդելու հզոր ուժ ունի: Գրականության դերի բարձրացումը կոչված է ժամանակակից սերնդի մեջ դաստիարակելու արժանապատվություն, մարդասիրություն, հայրենասիրություն:

Մինչև «Գրականություն» առարկային ծանոթանալը սովորողները ուսումնասիրում են «Մայրենի» առարկան 5-րդ և 6-րդ դասարաններում: Եվ հենց «Մայրենիի»

դասավանդման շրջանակներում էլ արդեն առկա են բարենպաստ պայմաններ աշակերտների մեջ համապատասխան արժեհամակարգ ձևավորելու առումով:

Առաջին հերթին, կարևոր և անհրաժեշտ արժեք է մայրենի լեզվի նկատմամբ սիրո սերմանումը, քանի որ հայրենասիրությունն ու ազգապահպան մտածելակերպը սկսվում է լեզվից ու լեզվի նկատմամբ ունեցած վերաբերմունքից:

Հինգերորդ դասարանի «Մայրենի» առարկայի թեմատիկ պլանավորման մեջ ընդգրկված են հեքիաթներ, պատմվածքներ, բանաստեղծություններ, որոնց միջոցով ուսուցիչը ոչ միայն առարկայական գիտելիք է տալիս, այլև փորձում է աշակերտի հոգևոր կյանքում արժևորել հայոց լեզվի դերն ու նշանակությունը (Սիլվա Կապուտիկյան «Խոսք իմ որդուն», ասույթներ մայրենի լեզվի մասին,Գևորգ Էմին «Մեր այբուբենը»), դատապարտել վատ արարքներն ու գնահատել լավը («Հայրը և զավակները» (խորվաթական ժողովրդական հեքիաթ), կարևորի բարեգործությունը («Անտառի տնակը»),մարդասիրությունը (Հանրի Զարյան «Նա»), աշխատասիրությունը (հայկական հեքիաթ «Ոսկի արտը»), գիտակցի արժեքները պահպանելու կարևորությունը (Վիգեն Խեչումյան « Զվարթնոց ») և այլն:

«Լինում է, չի լինում » բաժինն ավարտելուց հետո կարելի է համախմբել և ստեղծել ամրակայման դաս՝ աշակերտների մեջ զարգացնելով հիշելու, համեմատելու, կիրառելու, վերլուծելու, գնահատելու և ստեղծելու ունակությունները:

Մուտքի առաջադրանքները կարելի է կատարել աշակերտների հետաքրքրությունները խթանող մեթոդական հնարների միջոցով: Օրինակ՝ «Մտքերի տարափ կամ մտագրոհ» մեթոդով վերհիշել հեքիաթի տեսակները, կառուցվածքը, հիմնական բովանդակությունը: Հետո ավանդական հարց ու պատասխանի միջոցով կարելի է առաջարկել, որ թվարկեն իրենց սիրած հեքիաթները և ասեն, թե ինչու՞ են սիրում հենց այդ հեքիաթը: Ապա կատարել հետևյալ աշխատանքը. քարտերի վրա նախօրոք գրել ասացվածքներ («Բարի անունը ավելի երկար է ապրում, քան չար անունը», «Բոլոր պտուղներից ավելի քաղցր է մարդկային աշխատանքի պտուղը», «Մարդիկ արժանի են այն վերաբերմունքին, որը վաստակել են», «Արևը ներկում է երկիրը, իսկ աշխատանքը՝ մարդուն», «Ամեն ինչ ունի իր օգտակարության ու վնասի չափը» և այլն) և աշակերտների միջոցով նախ խմբավորել, թե ո՞ր ասացվածքը ո՞ր ստեղծագործությանն է վերաբերում, ապա համեմատել, հետո վերլուծել: Աշակերտների արժեհամակարգում կձևավորվեն կամ կզարգանան այնպիսի արժեքներ, ինչպիսիք են աշխատասիրությունը, սեփական արարքների համար պատասխանատվության զգացումը, լավություն անելու և բարիք ստեղծելու անհրաժեշտությունը: Այս ամենից հետո կարելի է հանձնարարել ստեղծագործական շարադրություն կամ հեքիաթի հորինում՝ նշված ասացվածքներից մեկն ընտրելով որպես վերնագիր:

Վեցերորդ դասարանի «Ես և իմ ընտանիքը» բաժնի միջոցով աշակերտների արժեհամակարգում ձևավորվում է ընտանիքի դերի և նշանակության գիտակցումը, «Իմ տունը Հայաստանն է» և «Հայրենի բնաշխարհ» բաժնի միջոցով՝ հայրենասիրություն, վերաբերմունք հայրենի եզերքի և բնաշխարհի հանդեպ: Հրանտ Մաթևոսյանի «Հացը» ստեղծագործության շնորհիվ աշակերտները արժևորում են աշխատանքի կարևորությունը: Այստեղ պետք է առանձնացնել հետևյալ մտքերը՝ «Անբանը հաց ուտելիս առողջ է, աշխատելիս՝ հիվանդ»,«Աշխատանքը սև է, հացը՝ սպիտակ», «Բերան կա, հաց չկա, հաց կա, բերան չկա»:

Յոթերորդ դասարանի ծրագրով նախատեսված է նաև Ակսել Բակունցի «Սպիտակ ձին» պատմվածքը, որն ուսուցանելիս պետք է նշել հետևյալ նպատակները. պատկերացում տալ 20-րդ դարի սկզբին հայ իրականության մեջ ապրող գյուղացու չարքաշ կյանքի մասին, բռնապետական կարգերի, ցարական Ռուսաստանի անօրինությունների մասին, հայ գյուղացու իրավունքների ոտնահարման մասին, ինչպես նաև ներկայացնել կենդանիների արժևորումն ու նվիրվածությունը գյուղացիների կողմից:

Տվյալ դասի վերջնարդյունքներն են՝ աշակերտը կարժևորի ազնվությունը, աշխատասիրությունը, ընկերասիրությունը, հավատարմությունը, արդարությունը, մարդու անկոտրում կամքի դրսևորումը, չնայած բազում ցավերի և տառապանքների՝ մարդ մնալու ունակությունը:

ՈԻթերորդ դասարանում սովորողները ուսումնասիրում են Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունները:

Հայրենիքի թեմայի քննությունը Թումանյանի ստեղծագործություններում արդիական նշանակություն ունի: Ամենայն հայոց բանաստեղծի հայրենասիրական քնարերգության վերլուծությունը նպաստում է սովորողների հայրենասիրական դաստիարակության ամրապնդմանը:

Թումանյանի ստեղծագործությունների ուսումնասիրության նպատակը սովորողներին ոչ միայն գիտելիքներով զինելն է, այլև նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշներ, արեքներ ձևավորելն է:

Եզրակացություն

Ամփոփելով աշխատանքի շրջանակներում ներկայացված մոտեցումներն ու տեսակետները՝ կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

Արժեհամակարգի ձևավորման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, այդ թվում՝ «Գրականություն» առարկան:

Դպրոցում սովորողները գրականության ծրագրի շրջանակներում ծանոթանում են հազարամյակների կենսագրություն ունեցող հայ գրողների, բանաստեղծների ձեռքբերումներին, ստեղծած արժեքներին և համամարդկային նվաճումներին:

Մատաղ սերնդին ազգային արժեհամակարգով դաստիարակելու գործում կարևոր դեր ունի հայրենասիրական դաստիարակությունը, որով սերմանվում է հայրենիքի հանդեպ սեր և նվիրվածություն:

Ժամանակի պահանջն է կրթել և դաստիարակել ազգային մտածողությամբ ու արժեքներով տոգորված սերունդ՝ նրանց մեջ ներարկելով հայրենասիրություն, համախմբվածություն, դատելու կարողություն, նաև ոգևորել անցյալի հերոսական դրվագներով: Բանավեճերի և օրինակների միջոցով նրանց ցույց տալ, թե ինչերի է ընդունակ իր հողն ու ջուրն ամեն գնով պաշտպանելու պատրաստ զինվորը, հայ գյուղացին և սովորական հայ քաղաքացին:

Մայրենի, հայոց լեզու և գրականություն առարկաների դասաժամերին պետք է ներկայացնել մեր ազգայինը, քրիստոնեականը, հայոց լեզվի դերը՝ որպես ազգապահպանման համար մեկ գործոն:

Օգտագործված գրականության ցանկ

1. Մանասյան Ն., Հանրակրթության արժեքային համակարգը, «Մանկավարժություն» գիտամեթոդական վերլուծական ամսագիր, 2004թ., N1/2, էջ 6-15:

2. Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Եր., 2002,:

3. Бехтерев В.М., Избранные работы по социальной психологии, М., 1994

4. Ա.Ա. Բալյան Մանկավարժական վարպետության հիմունքներ,Երևան, << Լույս>> հր. 1988:

5. Անաստասյան Բ. Հ., Ազգային ավանդույթների, սովորույթների դերը երեխաների ընտանեկան դաստիարակության գործում, «Ընտանիք և ազգային հոգեբանություն», նյութերի ժողովածու, Երևան, 1991:

6. Փախչանյան Ա., Դպրոցը, արժեքները և տարատեսակ «ազատությունները», Երևան, 2018, https://mediamax.am/am/column/12925/

7. Փարեմուզյան Ի., Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում, Երևան, 2018: